

Ռուսական ակադեմիայի գործունեության առաջին հարյուրամյակի տարեգրքերում հայերն ու հայ մշակույթը թուուցիկ հիշատակվող հյուրեր են մեծ մասամբ, որոնց մասին հատվածական տվյալներ կարելի է քաղել Կովկաս և Արևելք գործուղվող գիտնականների, այսինքն՝ օտար ծագմամբ ռուս ակադեմիկոսների ուղեգրական հաշվետվություններից: Հատկանշական են այս առումով XVIII դ. ռուսական ակադեմիայի հանձնարարությամբ կայսրության հարավային գավառները և Կովկաս առաքված այն գիտական ուղևորությունները, որ ձեռնարկել են ժամանակի հանրաճանաչ գիտնականներ, ակադեմիկոսներ Յոհան Անտոն Գյուլդենշտեդը (1745—1781), Պետեր Պալլասը (1741—1811), Յոհան Գեորգիև և Ուրիշներ, Դրանց շնորհիվ հավաքվում և իմաստավորվում էին փաստական ուշագրավ նյութեր հայոց ազգագրության. ու լեզվի վերաբերյալ: Հայագիտության շահերի տեսակետից հիշարժան էին նաև ակադեմիկոս Հայնրիխ Յուլիուս Կլապրոտի (1783—1835)՝ Կովկասի ժողովուրդների պատմությունը, լեզուներն ու կենցաղը ուսումնասիրելու նպատակով 1807—1808 թթ. կատարած հետազոտություններն ու շրջագայությունները, որն առաջին անգամ լեզվաբանության պատմության մեջ առաջադրում էր հայերենի և ուգրոֆինական լեզուների ցեղակցության խնդիրը, որ, իհարկե, հետագայում հերքվեց, բայց իբրև հայերենի բառապաշարի քննության և աղերսակցությունների բացահայտման փորձ, թեկուզ և ձախողված, հետաքրքրական էր³, Կլապրոտը մտքեր էր շարժում և կյանքի կոչում թե՛ր ու դեմ տեսակետներ: Ի դեպ, Կլապրոտը զբաղվել է նաև հայ հին մատենագրության հարցերով՝ հատուկ աշխատություն նվիրելով Կիրիկյան Հայաստանի թագավոր Հեթում I-ի՝ դեպի մոնղոլ տիրակալ Բաթուի և Մանգուխանի բանակ կատարած ճամփորդության, ինչպես նաև Հարություն Արարատյանի գործակցությամբ թարգմանել Հովհան Ոսկերչյանի հետաքրքրական հուշագրությունները (տպագրված՝ Փարիզ, 1818) հայոց վերջին տասնամյակների պատմության մասին: Այս առումով Կլապրոտը ռուսական ակադեմիայում հայ մշակույթով ու բանասիրությամբ զբաղվող առաջին լուրջ դեմքն էր, որի ընթացքում շավղով հետագայում ընթանում էր հայտնի կովկասագետ ու ազգագրագետ, ակադեմիկոս Ա. Շյոգրենը (1794—1855), որի ազգագրական ու լեզվաբանական հետազոտությունների արդյունքները, որ վերաբերում էին հայերին, այնպես էլ լույս աշխարհ չեկան:

Ռուսական հայագիտության առաջին տասնամյակների մասին խոսելիս չի կարելի մոռացության մատնել «Ասիական ակադեմիայի» ստեղծման պատմությունը, մի ռոմանտիկ գաղափար, որ արժարժվել էր տակավին 1733 թ. և շուրջ 80 տարի հետո, 1810-ին Ս. Ուվարովի նոր խմբագրությամբ, հարուստ առել: Դրա սկզբնավորողները արևելագետ Գ. Կերը (1692—1740) և հռչակավոր գիտնական Միխայիլ Լոմոնոսովն (1711—1765) էին: Ըստ Գ. Կերի նախագծի, այդ հաստատությունը կոչվելու էր «Արևելյան ուսմունքների և ռուսական կայսրության մեջ եղած լեզուների ակադեմիա կամ ընկերություն», իսկ Ս. Լոմոնոսովի ձեռագրերում մնացած նշումների համաձայն՝ պարզապես «Արևելյան ակադեմիա» («Ориентальная академия»): Եթե մի պահ հիշենք, թե ինչ վիճակի մեջ էր բուն ռուս ժողովրդի տնտեսական-քաղաքական-հոգևոր

³ «Журнал министерства народного просвещения», 1835, часть VIII, стр. 325.

կյանքի քննությունը զբաղվող գիտությունների վիճակը XVIII դ., դժվար չպիտի լինի հասկանալի, թե ինչու մարմին չառավ ռուսական ակադեմիայի այս հետաքրքրական նախագիծը:

Անշուշտ, ժանոթ լինելով Կերի ու Լոմոնոսովի ծրագրերի ձախողման պատմությանը և ջանալով ռուսական իշխանություններին շահագրգռել այս անգամ արդեն «Ասիական ակադեմիայի» ստեղծման գաղափարով, Սերգեյ Ուվարովը (1786—1855) նկատում էր, որ Կովկասի և արևելյան մյուս երկրների հետ անմիջական առնչություններ ունեցող մի այնպիսի երկիր, ինչպիսին Ռուսաստանն էր, չէր կարող անտարբեր լինել նրանց ուսումնասիրության նկատմամբ, մանավանդ ուր, գիտական հետաքրքրությունից ավելի դա ուներ քաղաքական նշանակություն, էլ չենք ասում՝ գրական-գեղարվեստական, քանի որ «Արևելյան ժողովուրդների բանաստեղծության մեջ հենց առաջին հայացքից մենք նկատում ենք մտքերի անսովոր թափ և բանականությունը զմայլեցնող արտահայտությունների պերճանք ու վեհություն»: «Ասիական ակադեմիան», ըստ Ուվարովի նախագծի, առանձնահատուկ ուշադրություն էր նվիրելու Անդրկովկասի քրիստոնյա ժողովուրդների՝ հայերի և վրացիների մատենագրության ուսումնասիրությանը: Այնտեղ ասված էր. «Հայոց և վրաց մատենագրությունը պատմական առումով արժանի է ուշադրության, քանի որ վրացիներն ու հայերն ունեն ինքնուրույն ժամանակագրություններ, որոնք իրենց մեջ պարունակում են պատմական այնպիսի փաստեր, որպիսիք աննպատակ կլինեին փնտրել Ասիայի, Հունաստանի և Հռոմի պատմագիրների մոտ... Հայոց գրականությունն այնքան քիչ է հայտնի, որ մենք անգամ չգիտենք անուններն այն երկրների, որ վերաբերում են նրան: Սակայն Ռուսաստանի համար չափազանց օգտակար կլինեին մոտիկից ծանոթանալու այս երկու ժողովուրդների հետ...» և այլն:

Նկատենք միայն, որ Ուվարովի նախագիծը ժամանակին բավականաչափ մտքեր հուզեց և՛ Ռուսաստանում, և՛ Արևմուտքում (ներանգվ հետաքրքրվեցին Գյոթեն, Նապոլեոնը, ռուս նշանավոր բանաստեղծ Վ. Ժուկովսկին և ուրիշներ), իսկ ապա մոռացվեց:

Գիտության պատմաբանները և հայագիտության անցած ուղու իմաստավորողները արդեն վաղուց նշել են այն մեծ շրջադարձը, որ տեղի ունեցավ ռուսական արևելագիտության և հայագիտության մեջ, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո. «Ռուսաց տիրապետությունն Հայաստանի մի մասին եղավ իսկական պատճառ թե՛ հայի նյութական բարօրության և թե՛, որ գլխավորն է, նաև նրա հոգևոր վերածնության և զարգացման: Ռուսաց պետական հիմնարկություններն, առավելապես ճեմարաններն (իմա՝ ակադեմիաները) ու գիտնականներն, այս անգամ իրենք եղան նոր մղիչն հայագիտության», — գրել է նշանավոր հայ բանասեր Կարապետ Կոստանյանը⁵: Եվ սա անժխտելի իրողություն է: Ռուսաստանին միանալուց հետո ո՛չ միայն ավելի հաճախակի դարձան դեպի Կովկաս ու Հայաստան գիտական արշավները, որ խրախուսվում ու հովանավորվում էին ռուսական ակադեմիայի կողմից, այլև հայ մատենագրության ու լեզվի ուսումնասիրության հարցերը, որով զբաղ-

¹ Մեջբերում է. Գրիգորյանի «Русские печатные источники конца XVIII—начала XIX вв. об Армении» հոգվածից, տպագրված՝ ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր», 1955, № 6, էջ 89—90:

⁵ Կոստանյան, Հայագիտությունն Արևմտյան Եվրոպայում, Թիֆլիս, 1910, էջ 43:

վում էին Կազանի ու Պետերբուրգի համալսարանները, կայսերական ակադեմիայի պատմա-բանասիրական բաժանմունքը և Ասիական թանգարանը, արտաքին գործերի մինիստրությանը կից արևելյան լեզուների ինստիտուտը և այլն: Եվ որ ուշագրավ է, 1836 թ. ռուսական ակադեմիայի կազմում ընտրվում է հայ-վրացական բանասիրության գծով մի իսկական ակադեմիկոս:

Ռուսական ակադեմիան այս շրջանում պատշաճ օգնություն ցույց տվեց Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆ. Պարրոտի (1791—1841) Արարատ կատարած գիտարշավին (1829 թ.), որը յուրօրինակ ձևով նպաստեց հայ իրականության մեջ սնոտիապաշտության և առասպելների մշուշը ցրելուն և բնական երևույթների մասին ռեալիստական հայացք մշակելուն, սթափ հայացքով հայության արդի վիճակը քննելուն և նրա հոգևոր ու տնտեսական կյանքի բարվոքման վերաբերյալ օգտակար ծրագրեր մշակելուն, էլ չենք ասում այն պատմա-ազգագրական նյութերի մասին, որ գիտական հասարակության սեփականությունն էին դառնում Պարրոտի ուղեգրական հաշվետվության միջոցով: Ֆ. Պարրոտի «Reise zum Ararat» («Ուղևորություն դեպի Արարատ») դիրքը լավագույն ուղեցույցը դարձավ Արևելք ու Հայաստան գործուղվող բնախույզ-գիտնականների ու ճանապարհորդների համար: Ի դեպ, այդ աշխատության համար Ֆ. Պարրոտը ընտրվեց Ս. Պետերբուրգի ակադեմիայի թղթակից-անդամ:

Ակադեմիայի նախաձեռնությամբ 1840 թ. աշնանը սկսվեց նոր ծրագիր մշակվել Արարատի հետազոտության համար (հեղինակներ՝ ակադեմիկոսներ Գ. Պարրոտ, Կուպֆեր, Բրանդ), որն այնուհետև ինքնաբերաբար ձուլվեց պրոֆ. Աբիխի (1806—1886)՝ պատմական Հայաստանի երկրաբանական հետազոտության առավել ընդարձակ ծրագրի մեջ, որի հաջող կատարման շնորհիվ (սկսվեց 1844-ի գարնանից) հայագիտությունն ևս ստացավ որոշակի արդյունքներ. ուսումնասիրվեցին հայկական մի շարք հնություններ և Անի քաղաքը, հավաքվեցին վիմագիր հիշատակարաններ, որոնք փաստագրական հիմք ծառայեցին առաջիկա հայագիտական հետազոտությունների համար՝ ռուսական ակադեմիայի շրջանակներում:

Հայագիտությանը, անշուշտ, շոշափելի նպաստ կբերեր հուշակավոր գիտնական Ալեքսանդր Հումբոլտի (1769—1859) ուղևորությունը դեպի Արարատ, որ նախատեսվում էր 1830-ին կամ հաջորդ տարիներին⁶, ապա և նույն Հումբոլտի միջամտությամբ ֆրանսիացի հայտնի հայագետ Անտուան Սեն-Մարտենի (1791—1832) ծրագրած ճանապարհորդությունը, որոնց երկուսին էլ օժանդակելու ցանկություն էին հայտնել ռուսական կառավարությունը և գիտությունների ակադեմիան: Հումբոլտն իր ուրալյան և միջին-ասիական ուղևորությունից հետո (1829, 2-րդ կես), որ զուգահեռեց Ֆ. Պարրոտի ճանապարհորդությանը դեպի Արարատ, միառժամանակ հետաձգեց իր կովկասյան և պարսկական հետախուզումները, իսկ Սեն-Մարտենը 1832 թ. հուլիսին անսպասելիորեն վախճանվեց:

Ռուսական ակադեմիայի Ասիական թանգարանն ևս զգալի դեր է խաղացել հայագիտության զարգացման գործում, որ արտահայտվել է ամենից

⁶ В. Есаков, Александр Гумбольдт в России, М., 1960, стр. 56—58.

⁷ «Արձագանք», 1893, դեկտեմբերի 10, № 148, էջ 2—3:

առաջ հայկական ձեռագրեր հավաքելու մարզում: Եթե մինչ այդ հայկական ղրղաղրերը պատահական հյուրեր էին ռուսական հնագրաններում, ապա ակադեմիկոս Ք. Ֆրենի (1782—1851) ջանքերով Ասիական թանգարանի ստեղծումից հետո (1818) սկսվեց նրանց դանդաղ, բայց հետևողական հավաքումը, ինչպես նաև ժամանակի հայ գիտնականների պատմա-աշխարհագրական և հնախոսական-տեղագրական հետազոտությունների հայերեն բնագրերի կամ ռուսական թարգմանությունների ձեռքբերումը: Այս ճանապարհով է գոյացել Ասիական թանգարանի հայերեն ձեռագրերի ճոխ հավաքածուն, որը պարունակում է հին ու միջնադարյան Հայաստանի գիտության ու գրականության բազմաթիվ հուշարձանների ընտիր օրինակներ, հայերեն վիմագիր արձանագրությունների հավաքածուներ, հնախոսական երկեր, վավերագրեր, որոնք հետագայում ուսումնասիրեցին, թարգմանեցին կամ հրատարակեցին Մ. Բրոսսեն, Մ. էմինը (1815—1890), Ն. Մառը, Ք. Պատկանյանը և ուրիշներ: Ասիական թանգարանի հայ գրագրերի հավաքածուն դարձավ հայագիտական հետազոտությունների ամուր հիմք, որի աղյուսներն իրար հետևից ու համբերությունով գրել են ակադեմիկոսներ Ք. Ֆրենը, Ֆ. Ադելունգը (1768—1843), Բ. Դյորնը (1805—1881), սենատոր Պաուլ Հանը (1793—1862), որը նույն ակադեմիայի թղթակից-անդամներից էր, հայ մեծ գրող Աբովյանը (1809—1848), պատմաբան Հովհաննես Շահխաթունյանցը (1799—1849), Ներսես Աշտարակեցի (1770—1857), հայագետ Բրոսսեն և ուրիշներ:

Մարի Բրոսսեն (1802—1880), որ ազգությամբ ֆրանսիացի էր, առաջին պաշտոնապես ընտրված ակադեմիկոսն էր ռուսական գիտության կաճառում, որը վրացագիտությանը զուգահեռ սկսեց եռանդով զբաղվել հայագիտական պրոբլեմների մշակմամբ: Նրանից շատ բան չէր պահանջվում: Տարեկան մի քանի տոնակազմի հայագիտության մարզում, գլխավորապես հայոց լեզվով հրատարակված աշխատությունների վերաբերյալ կամ կարծիք՝ ակադեմիայի քննությանը ներկայացված հայերեն գրքերի և ուսումնական ձեռնարկների մասին, որոնք շարադրվում էին ֆրանսերեն լեզվով: Այս պաշտոնական պարտականությունների անթերի կատարմանը զուգահեռ, իր երկարամյա գործունեության ընթացքում Բրոսսեն ֆրանսերեն թարգմանությամբ գիտության սեփականություն է դարձրել հայ միջնադարյան մատենագրության մի շարք հուշարձաններ, իր մեկնաբանությամբ և ծանոթագրություններով (Թովմա Արծրունի, Ուխտանես, Սամուել Անեցի, Կիրակոս Գանձակեցի, Ստեփանոս Օրբելյան, Մաղաքիա աբեղա, Մխիթար Այրիվանեցի, Առաքել Դավրիժեցի, Զաքարիա սարկավազ, Հովհաննես Մարեցի, Աբրահամ Կրետացի, Նսայի Հասուն-Ջալալյան, «Պատմություն Դավիթ-Բեկի» և այլն), Անիի, Հաղբատի, Սանահնի վիմական արձանագրությունները և այլն: Այն, ինչ չվիճակվեց անել Սեն-Մարտենին՝ հայկական գրագրերը, մասնավորապես էջմիածնի մատենադարանի ձեռագիր գանձերը հետազոտելու առումով, հաջողվեց նրա աշակերտին՝ Մարի Բրոսսենին, որը Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովի խնդրանքով 1847—1848 թթ. ռուսական ակադեմիայի կողմից գործուղվեց հիշյալ երկրամաս: Բրոսսեն Հայաստանում, ավելի ճիշտ, էջմիածնում մնաց 1848 թ. հունվար-փետրվար ամիսներին և բազմազան նյութերով ծանրաբեռնված՝ վերադարձավ Պետերբուրգ: Հրատարակված են նրա ուղեգրական հաշվետվությունը և էջմիածնի մատենադարանապետ Հովհաննես Շահխաթունյանցի ուղղված նամակները, որոնք լիակատար պատկերացում են տալիս նրա պա-

րապմունքների և հետաքրքրասիրությունների մասին: էջմիածնի մատենադարանում Բրդսսեն քննել է Խորենացու և Զենոբի պատմագրերի, Եվսեբիոսի Եկեղեցական պատմության, Ավետիք Տիգրանակերտցու Ժամանակագրության, Հուցունյաց խաչի պատմության, Մխիթար Գոշի Դատաստանագրքի և մատենագրական այլ հուշարձանների ձեռագրեր, հետաքրքրվել է Հ. Շահաթունյանցի կազմած՝ նույն Մատենադարանի ձեռագրաց ցուցակով և այլն⁸, կարճ՝ նա առաջիններ է բաղել իր հետագա վրացագիտական և հայագիտական աշխատությունների համար: Հայացքով Բրդսսեն պահպանողական էր, իսկ հայ պատմական գրականության գիտական արժեքի նրա ընկալումը՝ չափազանց միակողմանի: Ահա՛ թե ինչ էր գրում նա. «Զեմ բաշվիր խոստովանելեն՝ թե ինչպես մասնավոր սեր ունիմ հայ վարդապետաց պատմական երկասիրությանց. իրենց իրական արժեքը, ըստ մեծի մասին ականատես վկայք, ազգերնուն ընդարձակ վերաբերությունը Ասիո իշխողաց հետ, Սասանյանց, Սելջուկյանց և անոնցմէ ետքը եկողներուն՝ Մոնղոլաց, Խաչակրաց, Բյուզանդիոնի կայսերաց, և նորագոյն ժամանակաց մեջ՝ թուրքաց և պարսից ժամանակագրական ճշգրտությունը՝ ի բաց առյալ անհրաժեշտ և անխուսափելի վրիպակք գրչաց և ընդօրինակողաց, այս ամենը՝ արժանավոր ըրած են զիրենք գիտնոց մտադրությանը⁹: Եվ այսպես, հայ մատենագրության իրական արժեքը, ըստ Բրդսսենի, գլխավորապես սելջուկների, արաբների, պարսիկների, մոնղոլների, թուրքերի, բյուզանդական կայսրերի և խաչակիրների վերաբերյալ ժամանակագրական վստահելի ցուցումներ պարունակելն էր, իսկ թե ինչ մտավոր և գեղագիտական բարձրության էին հասել այդ ազգի գիտությունն ու գրականությունը, ինչ ներդրում կատարել ընդհանուր քաղաքակրթության մեջ, այդ ուղղությամբ Բրդսսեն չէր էլ մտածում: Հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել նաև մեկ ուրիշ հանգամանքի վրա: Այն տարիներին արևելագիտական աշխատությունների ճնշող մեծամասնությունը գրվում էր եվրոպական լեզուներով, և Բրդսսեն էլ նույնն էր անում, չմտածելով, որ բուն հայ ժողովուրդը դրանցից բնավ օգուտ չի կարող բաղել:

Զպիտի մոռացության տալ և այն, որ հայոց լեզվի և գրականության ուսումնասիրության արդիական հարցերը, որ առաջ էր քաշում բնաշխարհի հայ մտավորականությունը, միշտ չէ, որ հավանության էին արժանանում գիտնական ակադեմիկոսների շրջանում: Ակադեմիայի առանձին պաշտոնյաներ հլու կամակատարը լինելով փոքր ժողովուրդների ազգային վերածնության ձգտումները մեռցնելու ցարիզմի քաղաքականության, շատ հաճախ անուշադրության էին մատնում կամ մերժում առանձին համարձակ նախագծումներ, որոնցից հայագիտությունը կարող էր միայն ու միայն շահել: Այս առումով պերճախոս է հայ նոր գրականության մեծ հիմնադիր Աբովյանի «Նախաշավիղի» շուրջ ակադեմիայում ծավալված բանավեճը (1840 թ. մայիս), որ լուծելու էր չափազանց կենսական մի հարց. հայոց նոր գրականության ու դպրոցի լեզուն այսուհետև ևս պիտի մնար գրաբարը, որով ժողովուրդը չէր խոսում ու չէր հասկանում, թե՞ համարձակորեն քաղաքացիություն պիտի տրվեր աշխարհա-

⁸ Ա. Ս ե ռ ա կ յ ա ն, Հովհաննես Եպիսկոպոս Շահաթունյանցի կենսագրությունը, Ս. Պետերբուրգ, 1898, էջ 186—190:

⁹ Ա. Շ Ր ու մ ա ֆ և Գ. Զ ա ր բ հ ա ն ա լ յ ա ն, Ուսումնասիրությունը Հայ լեզվի և մատենագրության յԱրևմուտս, Վենետիկ, 1895, էջ 213:

բարին, որը միակ արտահայտիչն ու հայտարարն էր ժամանակի հայ մարդու մտածողության ու զգացումների և մեծագույն խթանչողը նրա հոգևոր զարգացման և ազգային համախմբման: Ակադեմիկոսներ Ք. Ֆրենն ու Գ. Պարրոտը (1767—1852) լիակատար հավանություն էին տալիս Աբովյանի տեսակետներին, որը դարի պահանջներից ելնելով՝ «նախաշավիղը» գրել էր աշխարհաբարով: Ակադեմիկոս Բրոսսեն, ընդհակառակը, երկդիմի գիծ էր վարում և իբրև պաշտոնական գրախոս և հին հայագիտության ներկայացուցիչ՝ քվեարկում է ընդդեմ աշխարհաբարի: Պատմությունը սակայն այլ վճիռ կայացրեց: Աբովյանի երկար տարիներ անտիպ մնացած երկերը տպագրվեցին և դարձան հիմքը հայոց նոր գրականության ու գրական լեզվի, իսկ դասավանդումը հայ դպրոցներում տարվեց ժողովրդական լեզվով:

Ահա՛ թե ինչու բարոյական իրավունք չունենք մոռացության մատնելու այն անկեղծ սրտացավությունն ու օժանդակությունը, որ հայ մտավորականության ու մշակույթի ուսումնասիրության համար արել է ակադեմիկոս Քրիստիան Ֆրենը: Այդ նրա թելադրանքով և եռանդուն մասնակցությամբ է, որ Կազանի համալսարանում հիմնվեց հայոց լեզվի ամբիոն և ղեկավարությունը հանձնվեց Ստեփանոս Նազարյանցին, երբ առանձին հեղինակավոր անձինք նպատակահարմար էին գտնում օտարերկրացու հրավիրել: Ֆրենը քաջալերել է Աբովյանի առաջին քայլերը հալ ժողովրդի պատմության և ազգագրության ուսումնասիրության մարզում, նրա կյանքի դժվարագույն պահերին բարոյական հզոր նեցուկ հանդիսացել: «Էլ ո՞ւմ պիտի դիմեմ իմ նեղության միջոցին, եթե ո՛չ նրան, որն այնքան հաճախ և այնքան սիրալիր կերպով խնամել և ամենայն անգամ յուր հայրական բարությունը յուր անկեղծ բարյացակամության հավաստիքներն է տվել ինձ», — գրել է Աբովյանը 1839 թ. փետրվարի 23-ին¹⁰, Հայ գրականությունը մշտապես երախտապարտ է Ֆրենին աշխարհաբարի դատի պաշտպանության համար, այլապես ո՞վ գիտե, թե ինչ պարագաներում ու կերպարանքով հրապարակ կգային Աբովյանի և Նազարյանցի երկերը: «Ամեն մի հայ, եթե միայն ուզում է իմանալ, թե ով է իր գրականության և լեզվի սատարողը, շնորհակալությամբ պիտի արտասանի Ձեր թանկագին անունը», — կարդում ենք Աբովյանի մեկ այլ նամակում¹¹:

1860—1870-ական թվականներից աստիճանաբար փոխվում է պատկերը. ռուսական ակադեմիայում արևելագիտական ու հայագիտական հետազոտություններն արդեն սկսում են գրվել ու թարգմանվել նաև ռուսերեն և մեծ մասամբ ռուսերեն: Այս առումով գնահատելի գործ է կատարել հայագետ Քերովբե Պատկանյանը (1833, 4. V—1889, 2. IV): Արդեն 1860-ից ռուսական ակադեմիան ո՛չ միայն հովանավորում էր ազգությամբ հայ այդ շնորհալի գիտնականին, այլև իր «նոթերում» և առանձին գրքերով լույս ընծայում նրա պատրաստած հայերեն քննական բնագրերը և հայ պատմագիրների ռուսերեն թարգմանություններն ու ուսումնասիրությունները (Մովսես Կաղանկատվացի, Սեբեոս և այլն): Ծիշտ է, 1861-ից Պատկանյանն աշխատանքի անցավ Պետերբուրգի համալսարանում, իբրև ղեկավար հայոց լեզվի ամբիոնի, բայց իր կապերը չխզեց ակադեմիայից: Ի հատուցումն նրա վաստակի, ռուսական ակադեմիան 1885-ին Պատկանյանին ընտրեց թղթակից-անդամ:

¹⁰ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, Կ. X, Երևան, 1961, էջ 214:

¹¹ Նույն տեղում, էջ 220:

Պատկանյանը ևս, հետևելով քարացած տեսակետներին, հայ պատմագիրներին երկերի վրա նայում էր սոսկ աղբյուրների արաբների ու մոնղոլների պատմության շարադրման համար, քիչ առիթներով միայն խոսելով նրանց ինքնուրույն և գիտական բարձր արժանիքների մասին:

Ռուս հայագիտության պատմության մեջ նոր էջ բաց անողը դարձավ Նիկողայոս Մառը (1864—1934): Մառի հրապարակ իջնելով ավարտվեց հին, մասամբ սխալաստիկ, երբեմն էլ ոռոմանտիկ գիտության դարը և ռեալիզմն ու քննական ոգին սկսեցին թագավորել ընդհանրապես հայագիտության մարզում, հանուն որի այնքան մեծ ջանքեր էին թափել նրա ընկերներն ու բարեկամները՝ հայագետներ Գալուստ Տեր-Մկրտչյանը (1860—1918) և Հակովբոս Տաշյանը (1866—1933):

Մառի հետազոտական աշխատանքներին բնորոշ էր վիթխարածավալ փաստական նյութի ընդգրկում, բանասիրական կնճռոտ հարցեր լուծելիս նյութական մշակույթի հուշարձանների ընձեռած տվյալների ներգրավում, լայն ֆոնի վրա կատարված համեմատություններ հայ և օտար կյանքի ու մշակույթի համանման երևույթների հետ, համարձակ նորարարական եղբայրանդամներ, վերջապես՝ երդվյալ հավատարմություն ճշմարտությանը: Մառը իր հայագիտական հետազոտությունների մեջ հանդես էր գալիս միաժամանակ և՛ որպես մեծ լեզվաբան, և՛ որպես բազմափորձ հնագետ, և՛ իբրև նրբաճաշակ բանասեր, և՛ իբրև խոհուն պատմաբան:

Հայոց առակների, Անիի պատմության, հնագույն վիշապ կոչված կոթողների, հայ-քաղկեդոնիկ գրական հուշարձանների, հայ հին գրականության առաջին ծիծեռնակների՝ վարքագրական երկերի, հայ-վրացական գրական-պատմական հուշարձանների և մշակութային առնչությունների և բազմաթիվ ու բազմազան այլ պրոբլեմների լրջմիտ քննությունն ու մեկնաբանումը Մառին դարձրել են ոչ միայն հայագիտության մեծագույն հեղինակություններից մեկը, այլև միջազգային չափանիշի արևելագետ ու հնագետ: Քաջածանոթ լինելով հայ և վրաց ժողովուրդների դարավոր կյանքին և պատմական ու մշակութային առնչություններին, Մառն առաջադրեց հայ-վրացական բանասիրության միասնական սկզբունքներ և տվեց շատ խնդիրների փայլուն լուծումներ: Մառն հպարտությամբ էր արտասանում հայ և վրաց ժողովուրդների մեծ զավակներին՝ Նարեկացու և Ռուսթավելու, Առաջավոր Ասիայի տնտեսական ու մշակութային մեծագույն նվաճումն հանդիսացող Անի քաղաքի անունները: Մառը չէր քաշվում համարձակորեն խոսելու նաև այն բարերար ազդեցության մասին, որ հայ մշակույթը ունեցել էր եվրոպական և արևելյան քաղաքակրթության վրա: 1925 թ. Փարիզի հայ ուսանողների համար կարդացած իր հայերեն դասախոսության մեջ նա ասաց. «Հայկական ժողովրդական գրքերը առաջիններն են իրենց տեսակում, որոնք նպաստել են զանազան ազգերի ժողովրդական գրագետ շերտերի մտերմացման արաբաբնակ Միջագետքից և Ասորիների կողմերից մինչև Կովկասյան լեռները... Հայկական ազդեցությունն նշմարվում է ոչ միայն Փոքր Ասիայի սելջուկյան արվեստի վրա, այլ նրանից առաջ Բյուզանդիայի և առանձին՝ ռուսաց հին ճարտարապետության վրա, կամ, ամեն դեպքում, ռուսների հետ միևնույն նախապատմական շրջանից ժառանգած գեղարվեստական ճաշակը ունին... Հայ ազգը իր թարգմանություններով հունարենից՝ անփոխարինելի ծառայություն է մատուցանում եվրոպական համամարդկային քաղաքակրթության, ոչ միայն պահելով դասական գրականու-

թյան հիշատակարաններն, այլ հունագիտության ամենաեռանդուն ախոյան հանդիսանալով և նպաստելով այդ լեզվի ուսումնասիրության Արևելքում և մինչև անգամ Հունաստանում...»¹²,

Իսկական իմաստով՝ Ռուսաստանի հայագիտական մտքի համախմբումն ու լայն օգտագործումը՝ գիտության տվյալ բնագավառի հիմնական ուղղություններին զարկ տալու առումով, սկսվեց միայն ներկա դարի առաջին տասնամյակի վերջերից, երբ Նիկողայոս Մառը ընտրվեց Ռուսաստանյան ակադեմիայի կազմում (1909, մարտի 7)։ Այդ տարիներին Մառի նախաձեռնությամբ մարմին առած փայլուն գաղափարներից ամենից առաջ հիշենք «Քրիստոնյա Արևելք» հանդեսի հիմնադրումն ու լույս աշխարհ հանելը 1912-ին, տարեկան երեք պրակից բաղկացած մի պատկանելի հատորով (խնդիրը հարուցվել է 1911 թ. մայիսի 11-ին, լուծվել՝ 1912 թ. հունվարի 11-ին)։ Մառի աջակիցներն էին այդ գործում ճանաչված արևելագետներ Բ. Տուրակը (1863—1920) և Վ. Բենեշևիչը (1874—1938)։ Հայաստանի պատմության ու մշակույթի հարցերը, որոնք առաջնորդում հարևանցիորեն էին հետաքրքրել ռուս արևելագետներից հատ ու կենտին, այն էլ ոչ ռուս ծագմամբ, հիմա մղվում էին առաջին պլան, մանավանդ որ առանց հայկական աղբյուրների լայն օգտագործման անկարելի էր հստակ պատկերացում կազմել կամ դնել ու լուծել Բյուզանդիայի և արևելյան մահմեդական աշխարհների պատմության ու բանասիրության առանցքային խնդիրներ։ Մառի անձնական հորդորներով (երբեմն էլ նրա աջակցությամբ) «Քրիստոնյա Արևելքին» իրենց մասնակցությունն են բերել հայագետներ Ն. Ադոնցը, Հ. Օրբելին, Գ. Տեր-Մկրտչյանը, Կ. Տեր-Մկրտչյանը, Գ. Հովսեփյանը, Ս. Տիգրանյանը, Տիրայր Եպիսկոպոսը, Լ. Մելիքսեթ-Քեղը, Աշխարհբեկ Քալանթարյանը և ուրիշներ։ «Քրիստոնյա Արևելքում» ինքը՝ Մառը ևս հրատարակել է մի շարք լրջմիտ հետազոտություններ, հայագիտական հրատարակությունների տեսություններ, բանասիրական մանր նկատողություններ, որոնց արժեքը անգնահատելի է հայագիտության համար։ Մառի ջանքերով հայագիտական հետազոտությունների են լծվել ռուսական արևելագիտության և դասական բանասիրության այնպիսի ճանաչված հեղինակություններ, ինչպես Վ. Բարթոլդը (1869—1930), Մ. Ռոստովցևը (1870—1952), Ս. Ժեբելյովը (1867—1942), Յա. Սմիրնովը (1869—1911), քննության նյութ դարձնելով հայ հին մշակույթի, հայ-հռոմեական հարաբերությունների, հայ քերականական մտքի, Անիի պատմության և բազմաթիվ ուրիշ հարցեր։

Մառի երկրորդ մեծ նախաձեռնությունը «Bibliotheca Armeno-Georgica» մատենաշարն էր, որի հրատարակությունը դարձյալ իրականացնում էր ռուսական ակադեմիան։ Որքան հայտնի է, հայկական մասից լույս տեսավ ընդամենը չորս հատոր՝ Հ. Մանանդյանի պատրաստած «Մեկնութիւն ստորագրութեանց Արիստոտելի ընծայեալ էլիասի իմաստասիրի» (1911), Կ. Կոստանյանի հավաքած «Վիմական տարեգիրը», որը մինչև ներկա դարի սկզբները զանազան հայագիտական և հնախոսական-ուղեգրական երկերում տպագրված հայերեն արձանագրությունների ամփոփ ժողովածուն էր (1913), Ն. Ադոնցի «Արուեստ Դիոնիսեայ Քերականի և հայ մեկնութիւնք նորին» (1915) հոյակապ

¹² Ն. Մառ, Հայկական մշակույթը, նրա արմատները և նախապատմական կապերը ըստ լեզվագիտության, Փարիզ, 1925, էջ 11, 15 և 16։ Ռուսական տարբերակը՝ «Об армянской литературе» (сборник), Ереван, 1941, стр. 14, 18, 19.

աշխատությունը և Մեսրոպ եպիսկոպոսի՝ «Հատուածք երկաթագիր հին կտակարանի» (1915) գրքուկը։ Վաղուց հերթի էին գրված բազմաթիվ մեծարժեք ուրիշ հատորներ ևս՝ Գ. Հովսեփյանի «Որ ի դպրութիւն պատմութեան յիշատակարանք ձեռագրաց», Ս. Տեր-Ավետիսյանի «Հայկական արձանագրութիւնք ի Հիւսիսային Հայաստան, որ ի Սոմխէթ ի վրաց յորջորջի», Հ. Օրբելու «Հայկական արձանագրութիւնք տանն հաշենոյ», Ա. Քալանթարյանի «Հայ արձանագրութիւնք սր. Աստուածածնա որ ի վանս Վանքստանայ» և «Արձանագրութիւնք վանուցն Քոբայրի ի հայ և ի վրաց լեզու», որոնցից ոմանց տպարանական շարվածքներն են մնացել, մյուսներից՝ ձեռագիրը կամ... ոչինչ։ Առաջին աշխարհամարտը կու տվեց դրանք։ Շատ չծավալվելու համար մի կողմ ենթ թողնում Ռուսական ակադեմիայի մյուս հրատարակությունները. «Византийский временник», «Известия...» և այլն, որոնք նույնպես իրենց էջերը սիրով տրամադրել են հայագիտական առաջնակարգ հետազոտություններին, որոնց հեղինակներն են Ն. Մառը, Ն. Ադոնցը, Վ. Բենեշևիչը և ուրիշներ։

Նիկողայոս Մառի երկարամյա մաքառումների արդյունքներից է նաև Կովկասյան պատմա-հնագիտական ինստիտուտը, որի պաշտոնական հիմնադրումը տեղի ունեցավ 1917 թ. հունիսի 27-ին։ Այստեղ հայագիտական գործունեություն էին ծավալում նրա առանձին աշակերտները, որոնց թվում նաև Սմբատ Տեր-Ավետիսյանը, իբրև հաստատության գիտնական քարտուղար, որի ջանքերի շնորհիվ փրկվեցին մեծ եղեռնի օրերին ոչնչացման դատապարտված մի շարք գեղարվեստական արժեքներ և նյութական ու հոգևոր մշակույթի հուշարձաններ։ Մեծ տառապանքների գնով և վտանգների միջով՝ Ս. Տեր-Ավետիսյանը Վասպուրականից ու Տարոնից էլ միածին ու Թիֆլիս փոխադրեց բազմաթիվ հայերեն ձեռագրեր, հնություններ, ուրարտական արձանագրությունների բրնձօրինակներ ու նմանակներ, որոնցից մասնավորապես վերջինները այսօր սեփականություն են դարձել Վրաստանի պատմության թանգարանի։

Կովկասյան պատմա-հնագիտական ինստիտուտի գիտահետազոտական գործունեությանը զարկ տալու նպատակով 1917 թ. հոկտեմբերի վերջերին հատուկ վագոններով Պետրոգրադից Թիֆլիս ուղարկվեցին Անիի երկարամյա գիտարշավի նյութերը՝ օրագրեր, հաշվետվություններ, ձեռագիր աշխատություններ, չափագրություններ, լուսանկարներ, վիմագրերի պատճեններ, զրբքեր և այլն, որոնք տեղ չհասած՝ դեռ ճանապարհին անվերադարձ կորան։

Հայագիտական հետազոտություններն առավել աշխուժացնելու համար ռուսական ակադեմիան կազմակերպում էր նաև մրցանակաբաշխություններ, լավագույն աշխատությունները պարգևատրում մեդալներով կամ նրանց հրատարակության համար միջոցներ հատկացնում։ 1912-ին այդպիսի մրցանակ է շնորհվել Տիրայր վարդապետի (1867—1956) «Ֆրիկ» պատմա-բանասիրական ուսումնասիրությանը և միջնադարի այդ մեծ բանաստեղծի տաղերի քննական բնագրերին։ Որոշում է կայացվել հրատարակելու այդ արժեքավոր աշխատությունը, որ սակայն վերստին խանգարել է վրա հասած պատերազմը¹³։

Ռուսական ակադեմիան ներկա դարի առաջին տասնամյակներին ևս անգնահատելի օգնություն է ցույց տվել մի շարք գիտարշավների դեպի Արևմտյան Հայաստան, դրանով իսկ ռուս գիտության ուսումնասիրության ոլորտի մեջ առնելով ո՛չ միայն Ռուսաստանին միացած հայկական բնաշխարհները, այլև

¹³ «Ֆրիկ. դիվան», Նյու-Յորք, 1952, էջ 234։

Արևմտյան Հայաստանը: Մենք նկատի ունենք Հովսեփի Օրբելու (1887—1961) ուղևորությունը Վասպուրական և Մոկաց աշխարհ, 1911—1912-ին, որը հայագիտությունը հարստացրեց պատմա-ազգագրական և լեզվաբանական հարուստ ավարով, Աղթամարի վանքի և հայկական վաղ վերածնունդի հուշարձանների հանգամանալից ուսումնասիրությամբ: Դրա արդյունքն են նաև Հ. Օրբելու «Հայ նարտարապետական հուշարձանները Աղթամար կղզում» և «Մոկաց բնագրեր» մեծարժեք հատորները (վերջինը անտիպ):

Հայ գրչության արվեստի և միջնադարյան բանաստեղծության համար նոր էջեր բաց արին Գարեգին Հովսեփյանի (1867—1952) գիտական գործունեությունը Նրուսադեմ և Արևմտյան Հայաստան 1911 և 1914 թթ., որոնց գիտական հաշվետվությունները տպագրվել են իր ժամանակին:

Ռուսական ակադեմիան նյութապես ու բարոյապես աջակցել է նաև Հայ արվեստաբան Թորոս Թորամանյանին (1864—1934). առանց այդ օգնության հազիվ թե բարեհաջող ավարտի հասնեին կամ իրականանային Անիի և հին ու միջնադարյան Հայաստանի ճարտարապետական հուշարձանների համակողմանի ուսումնասիրումը: Հօգուտ Թորամանյանի իրենց հեղինակավոր խոսքն են ասել Ն. Մառից բացի հայտնի արվեստաբան ակադեմիկոս Ն. Կոնդակովը (1844—1925), Մ. Պրեոբրաժենսկին (1854—1920) և ուրիշներ:

Հիշենք, վերջապես, ռուսական ակադեմիայի կողմից Ն. Ադոնցի և Աշխարհբեկ Քալանթարյանի գործունեումը Արևմտյան Հայաստան, 1917-ի գարնանը, որի արդյունքները սահմանակցուցիչ էին: Այս ճանապարհորդությունը ձեռնարկվեց անգամ համոզեց ինձ, — գրում էր հետագայում Ադոնցը, — որ ժամանակների կործանարար գործողություններից փրկված հնության շատ արժեքավոր հուշարձաններ ունչացել են անցած պատերազմի ընթացքում և այժմ էլ ունչանում են նույն պատերազմի հետևանքների պատճառով: Հայկական հողերը և, ընդհանրապես, ողջ Առաջավոր Ասիան այժմ ապրում է քաղաքական և սոցիալական այլափոխումների մի անցման շրջան, և, տարակույս չկա, որ ցեղային զանգվածների ու հողերի նոր վերախմբավորումը վերջնական ուղղված անցման վտանգ է սպառնում նյութական մշակույթի մնացորդներին, այն գիտական գանձերին, որոնք կարելի էր փրկել ուրիշ, ավելի սրտացավ վերաբերմունքի դեպքում: Հնության խոստով մարգարիտները, որոնք պահպանվել են մարդկանց բերանում ավանդությունների, հեքիաթների և վիպական երգերի ձևով և հյուսվել ու պատմվել են որոշակի բնաշխարհների սահմաններում, անվերջանալի ու բռնի տեղաշարժերի պայմաններում աստիճանաբար մոռացվում են կամ էլ այլանդակվում՝ ենթարկվելով կենցաղային ու տարածքային նոր իրադարձությունների ազդեցությանը¹⁴:

Հիշյալ շրջագայությունների ժամանակ հավաքած պատմա-հնագիտական նյութերը՝ ինչպես նաև անձնական դիտողությունները Ն. Ադոնցը հետագայում մեծապես օգտագործեց հայոց նախնական պատմությանը նվիրած իր ֆրանսերեն ծանրակշիռ հետազոտության մեջ (հայերեն թարգմանությունը տպվեց միայն վերջերս՝ «Հայաստանի պատմություն», 1972):

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո արմատապես փոխվեցին գիտական աշխատանքի կազմակերպման սկզբունքները: Գիտությունների ակադեմիան դարձավ ո՛չ միայն ռուսական, այլև Սովետական Միության բոլոր

¹⁴ ՍՍՀՄ ԳԱ դիվան (լենինգրադ), ֆ. 800, ց. 6, № 12, ք. 1:

ժողովուրդների գիտական մտքի խթանողն ու ուղղություն տվողը: Եվ այս առումով հայագիտությունը ևս մեծապես շահեց, Հոկտեմբերից հետո շարունակում էր գործել Կովկասյան պատմա-հնագիտական ինստիտուտը, որ ժամանակ անց վերանվանվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի կովկասագիտության ինստիտուտ, որ հայագիտական հետազոտությունները պատշաճ տեղ էին գրավում: Հիմնադրվեց ՍՍՀՄ ԳԱ անդրկովկասյան մասնաճյուղը, որն իր հերթին մասնաճյուղ ուներ նաև Հայաստանում: 20-ական թթ. ևս, թեպետև շարունակաբար վերակառուցվում էր ակադեմիան, իսկ տեղերում էլ գիտահետազոտական օջախներ էին ստեղծվում, հայագիտության հարցերը վերստին ուշադրության կենտրոնում էին, վերստին հատուկ նիստեր էին նվիրվում հայոց մշակույթի պատմության ու տեսության հարցերին, խրախուսում գիտության անիրավացիորեն մեկուսացված մշակներին: Այսօրինակ հոգացման արդյունք է Գ. Հովսեփյանի «Հավուց Թառի ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ» պատմա-հնագիտական պատկանելի ուսումնասիրությունը, որ տպագրվեց ավելի ուշ՝ 1937-ին (Նրուսաղեմում) և ձեռնվեց Մառի պայծառ հիշատակին:

Քչերին է թերևս հայտնի, որ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան 1920 թ. փետրվարի 25-ին որոշում է կայացնում Կիլիկյան Հայաստանի ուսումնասիրությունների համար Նիկողայոս Ադոնցի (1875—1942) ղեկավարությամբ ուղարկել հատուկ արշավախումբ և մեր հայրենիքի ու սովետական երկրի համար ծանր մի ժամանակաշրջանում դիմում կենտրոնական կառավարությանը՝ հատկացնել նախնական, հետախուզական աշխատանքների համար մի պատկանելի գումար¹⁵: Ըստ պահպանված նախագծի՝ Ադոնցի արշավախմբի խնդիրն էր լինելու. 1. Ռուբինյան թագավորների ժամանակների հայկական հնությունների հետազոտությունը՝ դղյակների, բերդերի, պալատների, եկեղեցիների և ուրիշ շինությունների նկարագրություն, լուսանկարում, ճարտարապետական կառույցների շփագրում: 2. Առհասարակ ժամանակի ցեղային խայտաբղետ կազմի և, մասնավորապես, հայկական միջավայրի դավանաբանական տարբեր հոսանքների ուսումնասիրությունը, հին աղանդների և հատկապես քաղկեդոնականության հետ նրանց ունեցած հարաբերության տեսակետից, ինչպես նաև պարզելու, թե ինչ առնչություններ ունեն Մաթերի հետ այժմյան հայերը և այսպես կոչված Կեսկեսները, ու դրանց վերաբերյալ նյութերի հավաքում: 3. Տեղական խոսվածքների և բարբառների վերաբերյալ նյութերի հավաքում, պարզելու համար, ի միջի այլոց, նրանց կապը մայր երկրի բարբառների հետ: 4. Մի ամբողջ շարք պատմա-աշխարհագրական վայրերի հաշվառում, որոնք ամենից ավելի կարևոր են Կիլիկյան հայկական թագավորության սահմանները գծելու համար և պարզելու դասական, բյուզանդական, հայկական և ժամանակակից աշխարհագրական տեղանունների փոխհարաբերությունը: 5. Հայ-բյուզանդական միջնադարի ուսումնասիրության համար կարևոր տվյալների հավաքում:

Նիկողայոս Մառը, որ այս ձեռնարկման ամենաջերմ պաշտպանն էր, ուսական ակադեմիային հղած իր զեկուլցում ընդգծում էր մասնավորապես, որ գործի կազմակերպման և բարեհաջող ավարտի մեջ «ղեկավար մասնակցություն պետք է ունենա գիտությունների ակադեմիան», պատճառաբանելով այդ

¹⁵ Նույն տեղում, ֆ. 1, ց. 1ա, № 168, 1920, ՄՓ, IV, § 37, էջ 40—42:

ներանով, որ ռուս արևելագետները նախքան համաշխարհային պատերազմը, հաղթահարելով բազում արգելքներ, արդեն հաստատուն ուղի էին հարթել դեպի Առաջավոր Ասիայի դիտական հետազոտությունը, ուր անասելի առատ հունձ կար նյութական և հոգևոր մշակույթի պատմության ամեն կարգի մշակների համար: Ու բացի այդ՝ ռուս արևելագետները մշակել էին Առաջավոր Ասիայի ուսումնասիրության համար տեսական մի շարք սկզբունքներ, որոնք միանգամայն նոր էին և տարբեր եվրոպական գիտության շրջանում քաղաքացիություն ստացած համանման դրույթներից: Ռուս արևելագիտությունը այդ ձևով նոր իմաստ էր հաղորդում Կովկասի ժողովուրդների պատմությանը, որի անբաժան մասն էին կազմում հայերենն ու հայագիտությունը: Ցավոք, անսպասելիորեն բարդված քաղաքական իրադրությունները գերեզման տարան նաև այս փայլուն ձեռնարկումը:

Նոտիկտեմբերյան ողջ ժամանակամիջոցում ռուս մեծ գիտնականների ձեռքի տակ իրենց գիտական ուսումնառությունն են անցել ժամանակակից հայագիտության բազմաթիվ վաստակաշատ ներկայացուցիչներ՝ գրականագետներ ու բանասերներ, լեզվաբաններ ու հնագետներ, պատմության և արվեստի մասնագետներ: Ն. Մառի, Հ. Օրբելու, Վ. Ստրուվեի, Ի. Մեշչանինովի, Կ. Տրեվերի և ուրիշների աշակերտները արգասավոր գործունեություն սկսեցին ծավալել հայագիտության մարզերում: Այդ գիտնականների ու նրանց աշակերտների միասնական ջանքերի շնորհիվ 1935 թ. հուլիսին բացվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը, իսկ 1943 թ. նոյեմբերից՝ հայկական ակադեմիան, որի հասարակագիտական բաժանմունքն իր բազմաթիվ ինստիտուտներով այսօր դարձել է հայագիտության զարգացման հիմնական օջախը մեր հայրենիքում ու նրա սահմաններից դուրս: Ծվ այնուհանդերձ, երբ հիմա ի մի ենք բերում վերջին տասնամյակների ռուս գիտնականների և Մոսկվայի ու Լենինգրադի ակադեմիական ինստիտուտներում ծավալված գիտահետազոտական աշխատանքների արդյունքները, չենք կարող երախտագիտությամբ չհիշել այն հիմնաքարային հետազոտությունները, որ կատարել են Հ. Օրբելին, Վ. Ստրուվեն, Ի. Մեշչանինովը, Ի. Դյակոնովը, Կ. Տրեվերը, Ն. Պիգուլևսկայան, Բ. Պիոտրովսկին և ուրիշներ: Օրբելու նոր աշխատությունները հիմք դարձան հայ ժողովրդական էպոսի, միջնադարյան գեղարվեստական արձակի և հայ հին պատմագիրների բնագրերի նորագույն հետազոտությունների համար: Ստրուվեն բաց արեց հայոց հնագույն պատմության (Դարեհի ժամանակաշրջանի) խորհրդավոր ծալքերը, Տրեվերը վերլուծեց հելլենիստական դարաշրջանի հայ մշակույթը, Պիոտրովսկին և Դյակոնովը քննության նյութ դարձրին ուրարտական պետության և հայ ժողովրդի կազմավորման հարցերը:

Գիտությունների ակադեմիան այսօր մշակում է սովետական ժողովուրդների բազմազգ գրականության, պատմության ու արվեստի առանցքային խնդիրները, իրականացնում համաշխարհային գրականության ու մշակույթի, ՍՍՀՄ ժողովուրդների պատմության բազմահատոր հրատարակությունները, որոնց մեջ ներգրավված են նաև հայ գիտական մտքի նշանավոր ներկայացուցիչներ: Այդ կապերն ու արգասավոր շփումները շարունակվում են, կյանքի կոչելով նորանոր հետազոտություններ, գիտական աշխատություններ, պատմական տեսություններ:

РОССИЙСКАЯ АКАДЕМИЯ НАУК И РАЗВИТИЕ АРМЕНОВЕДЕНИЯ

П. О. АКОПЯН

Доктор филологических наук

Резюме

Со дня основания Азиатского музея Российской Академии (1818 г.) началось соби́рание и исследование древнеармянских манускриптов. К последовательным же арменоведческим исследованиям обратились лишь в конце 30-ых гг. XIX в.

Основателем российского арменоведения как отдельной и важной области русского востоковедения является Н. Я. Марр, своими фундаментальными исследованиями разработавший кардинальные проблемы истории армянского народа, языка, культуры.

Начиная с 1910 г., с появлением журнала «Христианский Восток», научной серии «*Bibliotheca Armeno-Georgica*» и других изданий Российская Академия стала координировать арменоведческую мысль. Научные экспедиции в Западную Армению и Закавказье, возглавляемые академиком Н. Я. Марром и его учениками Н. Адонцем, И. Орбели, А. Калантаряном, С. Тер-Аветисяном и др., раскрывали неизвестные страницы древней истории Передней Азии и Армении, а также разрабатывали новые исследовательские принципы вопросов арменоведения.

После установления Советской власти, благодаря руководящей роли АН СССР, еще глубже и всесторонней освещаются вопросы арменоведения. Вышли в свет многотомные издания истории многонациональной советской литературы, культуры и народов СССР, труды академиков Н. Я. Марра, И. А. Орбели, В. Струве и др., внесших достойный вклад в развитие арменоведения.